

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԲԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՍԻՆՕԴԻ

—Ի 20 մարտի Սինոդ լուալ զԽնդիր Ծխականաց Հին Խրիմու և Սուբաշի գեղջ և ի նկատ առեալ զկանոնադրութիւն զկառավարութենէ վանուցն ս. Խաչի կազմեալն ի Ծխական ժողովոյ հրամայեաց. պատուիրել Առաջնորդի Թեմին նոր Նախիջևանի և Բեսսարաբիոյ նախ՝ անօրինել ծանուցանել խնդրատու Ծխականաց Հին Խրիմու և Սուբաշի, եթէ խնդիրք նոցա, որ վասն կարգի կառավարութեան վանուցն ս. Խաչի և կալուածոյն, ունին ընդունել լուծումն յետ գալստեան Նորոգ Հայրապետի ազգիս կից ընդ միւս խնդիրս կառավարութեան հաւայն վանօրէից և վանական կալուածոց և երկրորդ՝ ի հեռագրաց ժամ. կառավարչի վանուցն ս. Խաչի Տ. Ներսէս վարդապետի ի 26 փետրուարի և ի 17 մարտի տարբերս տեսանելով՝ զի դժուարանայ նա վարել զայդ պաշտօն, ուստի առնել զպատշաճ անօրէնութիւն վասն կարգելոյ զայլ ոք ի վանահայրս։ Թ. 220։

— Ի 15 ապրիլի Սինոդ լուեալ զգործ կառավարութեան կալուածոց, որք յԱլէքսանդրապոլ, հրամայեաց. ունելով առաջի աչաց, զի Հոգաբարձութիւն Սրբոյ Աթոռոյ Սուրբ Գրիգորի Ալէքսանդրապոլու ոչ կատարէ մինչ ցայժմ զպարտականութիւն իւր ըստ գործոյ կառավարութեան Էջմիածնապատկան կրպակաց, որ յԱլէքսանդրապոլ, ոչ հասուցանելով Սինոդիս զհասանելի Մ. Աթոռոյ լրիւ մասն վարձագրամոց կրպակացն՝ ուստի ազատ կացուցանելով զՀոգաբարձութիւնն յիրաւանց կառավարելոյ զկրպակսն, յանձնել զայն ի տեսչութիւն Հոգևոր կառավարութեան Ալէքսանդրապոլու, պատուիրելով վերջնոյս կառավարել զկրպակսն ըստ առաջնոյն, տալ ի վարձու զայն կրպակս պայմանաժամ վարձակալութեան որոց անցեալ է կամ անցանի, գանձել զապառիկ վարձագրումն և մատուցանել Սինոդիս զցուցակ ապառկաց վարձագրամոց ժողովեալ ի ձեռն Հոգաբարձութեան և այնոցիկ գրամոց, զորս Հոգաբարձութիւնն առեալ է ինքեան և զորս առաքեալ է ի Սինոդ։ Ի կատարումն վճռոյս տալ հրաման Կոնսիստորիային Երևանայ։ Թ. 235։

— Ի 17 ապրիլի Սինոդ լուեալ զգործ ձեռնադրութեան բնակչի Խանլուխլար գեղջ գաւառին Շարուր-Դարալագեազի Թորգոմայ Տէր Յարութիւնեան Զաքարեանց հրամայեաց. թոյլ տալ Կոնսիստորիային Երևանայ ընդունել զբնակիչն Խանլուխլար գեղջ զԹորգոմն Զաքարեանց ի Հոգևոր կոչումն առ ի ձեռնադրել զնա ի քահանայ Տաշարիս գեղջ գաւառին Շ.-Դարալագեազի։ Թ. 243։

— Ի նմին աւուր լուեալ զգործ պսակի բնակչի ս. Խաչ քաղաքի Իսահակայ Տիրացու—Պողոսեանց ընդ Հեղինէի Թիրքայեանց, հրամայեաց. թոյլ տալ նոցա մտանել յամուսնութիւն ի հինգերորդում աստիճանի խնամութեան։ Թ. 242։

— Ի նմին աւուր Սինոդ լուեալ զգործ պսակի բնակչի Քեշիշվերան գեղջ Սահակայ Սեդրակեան ընդ Լուսիկի Կարապետեան, հրամայեաց. թոյլ տալ նոցա մտանել յամուսնութիւն ի հինգերորդում աստիճանի խնամութեան։ Թ. 241.

— Ի նմին աւուր Սինոդ լուեալ զգրած պատկի բնակչի Կուսապատ գեղջ Յովհաննու Ամիրէկեան ընդ Հայկանուշի Աղասարեանց, հրամայեաց. թոյլ տալ զպատկ Յովհանիսի Ամիրեկեանց ընդ Հայկանուշի Աղասարեանց ի վերջերորդ աստիճանի ազգականութեան հանդերձ խորհրդութեամբ Թ. 240.

— Ի նմին աւուր Սինոդ լուեալ զգրած ձեռնադրութեան բնակչի Արուլ գեղջ դաւառի Ախալքալակայ Թորոսի Պարկեանց հրամայեաց. թոյլ տալ Կոնսիստորիային վրատանի ընդունել զբնակիչ Ապուլ գեղջ դաւառին Ախալքալակայ զԹորոսն ի հոգևոր կոչումն և առաջադրել Առաջնորդի թեմին ձեռնադրել զնա ի քահանայ գեղջն Թ 239,

— Ի 15 ապրիլի Սինոդ լուեալ զգրած զեղծմանց կառավարչի Մարցայ Սարգսի Սահակեան, հրամայեաց. ի քննին առեալ Սինոդի զգրածս գլատանէ 1, զի ի ժամ քննութեան Բենիկ վարդապետի ի յայտ եկեալ են մերձ յերկաթուղային կայարանն Քալագերան ընդ փայտեղէնս Սոսիի Վանեան և Մատթէոսի Քոչարեան 13 գերանք և ընդ փայտեղէնս Արշակայ Տէր Յովհաննիսեան 98 գերանք վանական կնքով. 2, ապն օրինակ յայտ եկեալ են առ 18 բնակիչս Դսեղ գեղջ այլ և այլ քանակութեամբ գերանք և ատաղձք, արտահանեալ յանտառէն Մարցայ, 3, առ բնակիչս Շամուտ գեղջ բազում փայտեղէն, 4, առ 44 անձինս ի բնակչացն Մարցայ, բազում գերանք, ատաղձք և այլ փայտեղէնք, 5, Սարգիսն Սահակեան վաճառեալ է Արշակայ Տէր Յովհաննիսեան զմի հազար գերանս իւրաքանչիւրն 1 ռ. 10 կ. տալով նմա նախօրօք զմի մասն յայնոցունց. 6, Սահակեանն հանդէպ ծախուց չունի զօրինաստանման փաստաթուղթս. 7, ըստ ժապաւինեալ մատեանի մուտքն ցուցեալ է պակաս 93 ռ. 81 կ. քան զմուտս արմատից մատենից անդորրագրաց, 8. չէ արգելեալ շինականաց զշինութիւն գոմոց յանտառին, որով մեծաւ չափու վնասեալ է կալուածն, 9. չէ արգելեալ գիւղացեաց զինքնագլուխ հատանումն ծառոց յանտառէն, որով նոյնպէս վնասեալ է կալուածն. 10. ըստ տոմսակի յ17 սեպ-

տեմբերի 1908 ամի № 81 թույլատրեալ է Գրիգորի Սարգսյանեան և այլոց երից անձանց պատրաստել զշպալս յընկեցեալ փայտից և չիշատակելով ի առմսակին զարժէս և զքանակ շպալիցն և ոչ իսկ զժամանակ արտահանութեան նոցին։ Անձինք այդոքիկ պատրաստեալ են զ2000 շպալս և ունէին պատրաստել ևս զ3000 ըստ բանից նոցա, վճարելով առ իւրաքանչիւր շպալն զ8– ական կոպէկս, մինչդեռ Սինօդս վաճառեաց զ2000 հատս ի նոցունց 30-ական կոպէկօք իսկ զհետևեալ 3000՝ 40ական կոպէկօք և 11. ցուցմամբք վկայից բազմաց հաստատեալ լինի, զի կառավարիչն կալուածոց Մարցայ Սարգիսն Սահակեան անխնայ հատեալ, իւրացուցեալ և վաճառեալ է յօգուտ իւր զփայտեղէնս ի կալուածոյն Մարցայ յանձնարարելոյն նմա, որով և գործեալ է յանցանս նախատեսեալս յ830 [2] յօդուածոյ պատժական օրինաց. ուստի և Սինօդս վճռէ նախ՝ յանձնել զնախկին կառավարիչն վանական կալուածոց Մարցայ՝ զՍարգիսն Սահակեան ըստ զօրութեան յիշատակեալ յօդուածոյն ի դատ քաղաքական իշխանութեան ի ձեռն պրոկուրորի դատարանին Տփխեաց, երկրորդ՝ կարգել զժամանակաւոր կառավարիչ կալուածոյն Մարցայ զպ. Ռոստոմն Թումանեան տալով նմա մինչ ցմշակումն ընդհանուր կանոնաց կառավարութեան և շահագործման համայն վանական կալուածոց զհետագայ հրահանգս ի կատարումն. 1, պահանջել և ժողովել զապառիկս վերջին ամաց ի գիւղօրէիցն. որովք և վճարել զպետական հարկս. 2. զտուրս յողջոյն գիւղօրէից ժողովել յերկրային բերոյ ըստ հասարակ եղեալ ի վաղնջուց անտի կարգի. 3. արգելուլ չինականաց չինել ի խոսս անտառին զամարային և ձմերային գոմս, ոչնչացուցանելով զչինեալս ի վերջին ամս. 4. արգելուլ չինականաց կերակրել զանասունս ոստիւք ծառոց. 5. արգելուլ նոցա հատանել որպէս ի պէտս չինութեանց իւրեանց, նոյնպէս և վասն արտահանութեան զնոր դալար ծառս. քանզի ընկեցեալ չոր փայտք շատ են յընթացս տասնեակ ամաց վասն յիշատակեալ պիտոյից. 6. անտառապահք պարտին ունել հսկողութիւն զի ի չինել

գիւղացեաց յանտառին ղթի, զկաւժ և զայլ գործիս մի առնուցուն և ընտրեսցին զփայտս զորս կամիցեն, այլ պարտին այդ ամենայն կատարեալ լինել գիտութեամբ կառավարչի և անտառապահացն և Ղ. զգտեալ առ ընթեր Մարց գեղջ զաղչայ հողաբաժինն, որով օգտին պետական ֆարինջ գիւղացիք վճարելով տարին ի վարձ զ80 ռուբլիս, յոյժ սակաւ տուրս, որ և տակաւին մնայ ապառիկ, թողուլ ի ձեռս ֆարինջ գիւղացեաց մի ամեայ ժամանակաւ ի տարին 100 ռուբլի վարձու, զի գիւղացիք Մարցայ առաջարկեն զայդ գումար, մինչ ցկարգաւորումն կալուածոյն։ Թ. 234։

— Ի 4 մայիսի Սինոդ լուեալ զգործ ձեռնադրութեան բնակչի Նուշիքենդ գեղջ Արսէնի Տէր Պետրոսեան ի քահանայ հրամայեաց. թոյլ տալ կոնսիստորիային Ղարաբաղի ընդունել զԱ.սէնն Տէր Պետրոսեան ի հոգևոր կոչումն և առաջադրել առաջնորդի թեմին ձեռնադրել զնա ի քահանայ Նուշիքենդ աւանի գաւառի Նուշւոյ։ Թ. 261։

— Յ8 նոյն ամսոյ Սինոդ լուեալ զգործ մեղադրանաց Գէորգայ քահանայի Զաքարեանց Եկատերինոդար քաղաքի հրամայեաց. առեալ ի նկատ զանվայել բարս Զաքարեանց Գէորգ քահանայի Եկատերինոդար քաղաքի առաքել զնա անորոշ ժամանակաւ ի վանս Սևանայ յապաշխարութիւն զրկելով ի քահանայագործութենէ։ Ի կատարումն վճռոյս հանել հրաման վիճ. կոնսիստորիային Աստրախանի և վանահօրն Սևանայ վանուց։ Թ. 268։

— Ի նմին աւուր, Սինոդ լուեալ զառաջադրութիւն Տ. Տեղակալի, որով յանձն առնէ զառաքեալն ի կողմանէ Վեհափառ Տ. Տ. Մատթէոս Կաթուղիկոսի զսանուն ժառանգաւորաց դպրոցին ս. Երուսաղէմի, առ ի ուսանել ի Հոգևոր Ճեմարանի Մ. Աթոռոյս, խնամել, հրամայեաց. պատուիրել վանական կառավարութեան Մ. Աթոռոյ տալ դպրացն Պետրոսի Ցարութիւնեան, Աստրոյ Զորպաճեան և Մանուէլի Գիւբէլեան տեղի բնակութեան ի հիւրատան և հոգալ ի սննդենէ և այլ ծախուց նոցին ցգալուստ Վե-

հափառ Հայրապետի, ծախելով դրամն ըստ յօդ. անակընկալ ծախուց։ Թ. 272։

— Ի նմին աւուր Մինոդ լուեալ զգործ ձեռնադրութեան բնակչի Բաշ-Ներակ գեղջ շրջանին Կարուց Նազարէթի Ներակունեայ հրամայեաց. ունելով առաջի աչաց՝ զի նախ՝ Նազարէթն Ներակունի չունի վկայական լրացուցիչ քննութեան չորրորդ դասարանի, որ պահանջի ծխական կանոնադրութեամբ և երկրորդ՝ որպէս տեսանի ի գրութենէ պրօկուրօրի շրջանային դատարանի Գանձակայ ի 14 ապրիլի տարւոյս Թ. 6706, մեղադրի նա ի սպանութեան ուսուցչի Պիլիպենկոյի, ուստի զմիջնորդութիւն, որ վասն ձեռնադրութեան զՆերակունին ի քահանայ թողուլ առանց հետևանաց։ Թ. 273։

—※✻※—